ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿՄՋՀ-ԳՀԾՁԲ-26/6/2

Ջրվեժ «27» 03 2026թ.

Ջրվեժի համայնքապետարանը, ի դեմս Նորայր Սանթրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և «Կաիման» , ի դեմս տնօրեն Կ.Միքայելյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը /2-րդ և 3-րդ չափաբաժիններ/ կազմում է 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է 2-րդ չափաբաժնի մասով 8256800 /ութ միլոն երկու հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, 3-րդ չափաբաժնի մասով 7026000 /յոթ միլիոն քսանվեց հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	«Կաիման» ՍՊԸ
գ. Ջրվեժ, Մելքոնյան 76	ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
ՀՀ ֆինանսների նախարարության ԿԳ	Շիրազի փ. 30 34
Հ/Հ 900102278059	Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 03546091	Հ/Հ 1570023314500100
	ՀՎՀՀ 01269447
----------Ն.Սանթրոսյան	----------Է.Միքայելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Պայմանագրի դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ԿՄՋՀ-ԳՀԾՁԲ-26/6/2/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
2	50111170/2	Տես ստորև	հատ	մինչև 1100000	1	Ջրվեժի համայնքապետարան Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2026թ. դեկտեմբերի 30-ը
3	50111170/3	Տես ստորև	հատ	մինչև 1100000	1		

Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն չորս ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ մեկ օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Տեխսպասարկման կայանում տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի արտահերթ: Սպասարկման ենթակա ավտոմեքենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 2, պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկվող տարածքում:

Ավտոմեքենաների սպասարկումը, որոնց քանակը միաժամանակ կարող է լինել մինչև 3, պետք է սպասարկվեն արտահերթ առանձին դիտահորով կամ ամբարձիչներով մեկ վայրում:

Խափանված մեքենայի մասին տեղեկություն ստանալուց հետո 1 ժամվա ընթացքում տեխսպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր դուրս գալու և իր միջոցներով, քարշակով ավտոմեքենան վերանորոգման կայան տեղափոխելու հնարավորությամբ: Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա 4 ավտոմեքենաների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն, լվացման կետ, կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ունենա էլեկտրոնային և էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար, դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման անհրաժեշտ սարքավորումներ, կատարվող աշխատանքների վրա ինժեներական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն:

Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա վերոնշյալ նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխսպասարկում կատարելու բոլոր միջոցները:

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

		2 չափ.	3 չափ.
Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	LEXUS ES250 մակնիշի ավտոմեքենա	RENAULT DUSTER մակնիշի ավտոմեքենա
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում		
1	Բռնկման համակարգի ստուգում	10000	8000
2	Սառեցման համակարգի ստուգում	5000	4000
3	Յուղման համակարգի ստուգում	4000	3000
4	Արտացման համակարգի ստուգում	4000	3000
5	Կցորդման համակարգի ստուգում	4000	3000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	4000	3000
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	4000	3000
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	4000	3000
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	4000	3000
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	10000	8000
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	4000	3000
12	ABS համակարգի ստուգում	4000	3000
13	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4000	3000
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	4000	3000
15	Թափքի վիճակի ստուգում	4000	3000
16	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	5000	4000
17	Շարժիչի հանում և տեղադրում	200000	180000
18	Շարժիչի վերանորոգում	500000	400000
19	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	50000	45000
20	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	50000	40000
21	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	150000	140000
22	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	4000	3000
23	Շարժիչի գլխիկի հղկում	30000	25000
24	Շարժիչի գլխիկի վերանորոգում	60000	50000
25	Փականի խցուկի փոխարինում	4000	3000
26	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	4000	3000
27	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	4000	3000
28	Հրիչների փոխարինում SOHC	4000	3000
29	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	30000	25000
30	Ատամնավոր փոկի փոխարինում	70000	65000
31	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	30000	25000
32	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	20000	15000
33	Ծնկաձև լիսեռի հղկում	50000	45000
34	Մխոցային օղակների փոխարինում	4000	3000
35	Կարտերի հանում և տեղադրում	25000	20000
36	Քիմիական լվացում 1 կտորի համար	15000	10000
37	Կալեկտորի հանում և տեղադրում	25000	20000
38	Թափանիվի հանում և տեղադրում	15000	10000
39	Թափանիվի պսակի հանում և տեղադրում	15000	10000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		

40	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	70000	65000
41	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	5000	4000
42	Յուղի պոմպի փոխարինում	30000	25000
43	Ղեկավարման բլոկի վերանորոգում	60000	55000
44	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում	20000	15000
45	Բռնկման կարգավորում	15000	10000
46	CO կարգավորում	15000	10000
47	Խարնարակի հանում և տեղադրում	15000	10000
48	Խարնարակի վերանորոգում	15000	10000
49	Օդի զտիչի փոխարինում	10000	8000
50	Օդորակիչի զտիչի փոխարինում	10000	8000
51	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	40000	35000
52	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	30000	25000
53	Բենզամղիչի փոխարինում	60000	55000
54	Վառելիքի զտիչի փոխարինում	25000	20000
55	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	25000	20000
56	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	25000	20000
57	Ակսելերատորի հանում և տեղադրում	15000	10000
58	Ակսելերատորի մաքրում	15000	10000
59	Տրամլյորի հանում և տեղադրում	-	-
60	Տրամլյորի վերանորոգում	-	-
	3. Սառեցման և արտածման համակարգ		
61	Հովհարի փոկի հանում և տեղադրում	25000	20000
62	Հովհարի հանում և տեղադրում	30000	25000
63	Ռադիատորի հանում և տեղադրում	30000	25000
64	Ռադիատորի վերանորոգում	30000	25000
65	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում	30000	25000
66	Թերմոստատի փոխարինում	25000	20000
67	Ջրի պոմպի փոխարինում	60000	55000
68	Ջրի պոմպի վերանորոգում	55000	50000
69	Ընդարձակող բաքի փոխարինում	40000	35000
70	Խլարարի հանում և տեղադրում	20000	20000
71	Խլարարի ներդիրի հանում և տեղադրում	15000	15000
72	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	15000	15000
73	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	60000	60000
74	Վառարանի ծորակի հանում և տեղադրում	40000	40000
75	Հովացման հեղուկի փոխարինում	25000	25000
	4. Կցորդում և ՓՏ		
76	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	35000	35000
77	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	80000	75000
78	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	80000	75000
79	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	20000	20000
80	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	15000	10000
81	Կցորդման փողրակի փոխարինում	25000	20000
82	Կցորդման կարգավորում	20000	15000
83	ՓՏ-ի հանում և տեղադրում	40000	35000

84	ՓՏ-ի վերանորոգում	150000	140000
85	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	50000	50000
86	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	50000	50000
87	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	50000	50000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	25000	20000
89	Բաշխիչ տուփի վերանորոգում	25000	20000
90	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	25000	20000
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	-	-
92	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	-	-
93	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	-	-
94	Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում	-	-
95	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	-	-
96	Միջանկյալ կարդանային լիսեռի հանում և տեղադրում	-	-
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
97	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	50000	45000
98	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	50000	45000
99	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	25000	20000
100	Կամրջակի խցուկի փոխարինում	15000	10000
101	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաառնու հանում և տեղադր.	20000	15000
102	Կիսաառնու առանցքակալի փոխարինում	15000	10000
103	Կիսաառնու խցուկի փոխարինում	15000	10000
	7. Կախոց		
104	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	150000	140000
105	Տրավերսի հանում և տեղադրում	100000	90000
106	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	15000	15000
107	Անվակունդի հանում և տեղադրում	30000	30000
108	Անվակունդի առանցքակալի փոխարինում	25000	20000
109	Անվակունդի բացակի կարգավորում	25000	20000
110	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	25000	20000
111	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	25000	20000
112	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	25000	20000
113	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	25000	20000
114	Ձսպանակի հանում և տեղադրում	15000	15000
115	Ձսպակի հանում և տեղադրում	15000	15000
116	Ձսպակի վռանների փոխարինում	10000	10000
117	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	15000	15000
118	Ցնցամեղմիչի լիցքավորում	20000	20000
119	Ներքևի լծակի հանում և տեղադրում	10000	10000
120	Ներքևի լծակի վռանների փոխարինում	10000	10000
121	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	10000	10000
122	Միջին ձգանի հանում և տեղադրում	10000	10000
123	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10000	10000
124	Վերևի լծակի հանում և տեղադրում	15000	15000
125	Վերևի լծակի վռանների փոխարինում	15000	15000
126	Գնդե հոդակապերի փոխարինում	15000	15000

127	Ծայրակաների հանում և տեղադրում	10000	10000
128	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	10000	10000
129	Հետևի կայունարարի հանում և տեղադրում	10000	10000
130	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	10000	10000
131	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	10000	10000
132	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	10000	10000
133	Հետևի զսպանակի փոխարինում	10000	10000
134	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	10000	10000
135	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	10000	10000
136	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	10000	10000
137	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	10000	10000
138	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	10000	10000
139	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10000	10000
140	Անվաբացքի կարագավորում	20000	20000
141	Ձողման աշխատանքներ 1 սմ համար	5000	5000
	8. Ղեկային մեխանիզմ		
142	Ղեկային կալունի հանում և տեղադրում	25000	25000
143	Ղեկային կալունի վերանորոգում	40000	35000
144	Ղեկային ձողի հանում և տեղադրում	25000	25000
145	Ղեկային ձողի նորոգում	25000	25000
146	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	25000	25000
147	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	25000	25000
148	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	25000	25000
149	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	25000	25000
150	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	25000	25000
151	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	25000	25000
152	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	25000	25000
153	Ղեկային ժապավենի փոխարինում	25000	25000
	9. Արգելակային համակարգ		
154	Գլխ. գլանի հանում և տեղադրում	30000	30000
155	Գլխ. գլանի վերանորոգում	30000	30000
156	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	20000	20000
157	Վակուումային ուժեղարարի նորոգում	20000	20000
158	Բանվ. գլանի հանում և տեղադրում	15000	15000
159	Բանվ. գլանի վերանորոգում	25000	25000
160	Արգելակային համակարգի օդահանում	10000	10000
161	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	10000	10000
162	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	10000	10000
163	Առջևի սուպպորտի վերանորոգում	10000	10000
164	Հետևի սուպպորտի վերանորոգում	10000	10000
165	Արգելակային փողրակի փոխարինում	20000	20000
166	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	30000	30000
167	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	10000	10000
168	Հետևի կոճղակների փոխարինում	10000	10000
169	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	30000	30000
170	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	30000	30000

171	Արգելակային սկավառակի հղկում	15000	15000
172	Արգելակային թմբուկի հղկում	15000	15000
173	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	15000	15000
174	ABS-ի հանում և տեղադրում	15000	15000
175	ABS-ի վերանորոգում	20000	20000
176	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	25000	25000
177	Ձեռքի արգելակի կարգավորում	15000	15000
178	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	25000	25000
	10. Էլեկտրասարքավորում		
179	Էլեկտրասարքավորման վերանորոգում	25000	25000
180	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	25000	25000
181	Գեներատորի հանում և տեղադրում	20000	20000
182	Գեներատորի վերանորոգում	40000	40000
183	Մեկնարկիչի հանում և տեղադրում	20000	20000
184	Մեկնարկիչի վերանորոգում	35000	35000
185	Առջևի լապտերի հանում և տեղադրում	15000	15000
186	Հետևի լապտերի հանում և տեղադրում	15000	15000
187	Լապտերի լամպի փոխարինում	15000	15000
188	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	25000	25000
189	Վազքաչափի հանում և տեղադրում	15000	15000
190	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	15000	15000
191	Սաքերի պանելի հանում և տեղադրում	80000	70000
192	Արագաչափի հանում և տեղադրում	20000	20000
193	Ազդանշանի հանում և տեղադրում	10000	10000
194	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	20000	20000
195	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	15000	15000
196	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	15000	15000
197	Ազդանշանային համակարգի տեղադրում	15000	15000
198	Մագնիտոլայի տեղադրում	-	-
199	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	30000	30000
200	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	30000	30000
201	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	40000	40000
202	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	40000	40000
203	Էլեկտրական տվիչների փոխարինում	30000	30000
204	Էլեկտրական անջատիչների փոխարինում	20000	20000
205	Լապտերների կարգավորում	10000	10000
206	Վառոցքի կոճի փոխարինում	30000	25000
207	Վառոցքի մոմերի փոխարինում	25000	25000
208	Կոնդիցիոների լիցքավորում	25000	25000
209	Կոնդիցիոների վերանորոգում	40000	40000
210	Թարթիչի միացման լծակի հանում և տեղադրում	35000	35000
211	Մարտկոցի հանում և տեղադրում	5000	5000
	11. Այլ ծառայություններ		
212	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	8000	6000
213	Ավտոմեքենայի լվացում	5000	5000
214	Անիվի հանում և տեղադրում	1000	1000

215	Անվադողի վերանորոգում	2000	2000
216	Անվադողի քանդում և հավաքում	2000	2000
217	Անիվի հավասարակշռում	1000	1000
218	Անիվի վալց	15000	15000
219	Նստարանի հանում և տեղադրում	15000	15000
220	Նստարանի նորոգում	30000	25000
221	Ծածկոցի ճոպանի հանում և տեղադրում	10000	10000
222	Դիմապակու հանում և տեղադրում	30000	30000
223	Դռան պաստառի հանում և տեղադրում	10000	10000
224	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 սմ - ի համար*	3000	3000
225	Արգոնե-զոդման աշխատանքներ, *գին 1 սմ - ի համար*	3000	3000
226	Խառատային աշխատանքներ 1 կտորի համար	5000	5000
227	Փականագործի աշխատանքներ 1 ժ, համար	10000	10000
228	Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար*	780	780
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		
1.1	Շարժիչի բլոկ	700000	650000
2.1	Շարժիչի գլխիկ	800000	750000
3.1	Բարձիկ	50000	50000
4.1	Շարժիչի գլխիկի միջադիր	50000	50000
5.1	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	300000	300000
6.1	Շարժիչի բաշխիչ լիսեռ	250000	250000
7.1	Շարժիչի փական դուրս մղող	25000	25000
8.1	Շարժիչի փական ներս մղող	25000	25000
9.1	Շարժիչի փականի խցուկ	5000	5000
10.1	Ծնկաձև լիսեռ	250000	250000
11.1	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	25000	25000
12.1	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	40000	40000
13.1	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	120000	120000
14.1	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	120000	120000
15.1	Հենակային տափողակ	10000	10000
16.1	Մխոց	100000	100000
17.1	Մխոցային օղակներ	130000	130000
18.1	Ատամնանիվ	40000	40000
19.1	Ատամնավոր փոկ	70000	70000
20.1	Ատամնավոր փոկի հոլովակ	50000	50000
21.1	Շղթա	50000	50000
22.1	Հիդրոձգան	30000	30000
23.1	Հրիչ	20000	20000
24.1	Հիդրոհրիչ	20000	20000
25.1	Բաշմակ	20000	20000
26.1	Հանգստարար	20000	20000
27.1	Թափանիվ	450000	450000
28.1	Թափանիվի պսակ	120000	120000
29.1	Խցուկ բաշխիչ լիսեռի	25000	25000

30.1	Շկիվ	130000	130000
31.1	Շարժաթև	40000	40000
32.1	Կարտերի միջադիր	45000	45000
33.1	Առջևի կափարիչի միջադիր	10000	10000
34.1	Միջադիր	35000	35000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
35.1	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	6000	5000
36.1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	8000	8000
37.1	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	8000	8000
38.1	Յուղի զտիչ	7000	7000
39.1	Յուղի պոմպ	110000	90000
40.1	Յուղի պոմպի շարժաբեր	45000	40000
41.1	Յուղի ռադիատոր	40000	30000
42.1	Յուղի փողրակ	15000	15000
43.1	Յուղի ծորակ	15000	15000
44.1	Վառոցքի մոմ	10000	10000
45.1	Բենզոբաք	100000	100000
46.1	Խառնարակ	10000	10000
47.1	Խառնարակի վերանորոգման հավաքածու	10000	10000
48.1	Ինժեկտորի ֆորսունկա	60000	50000
49.1	Վառելանյութի մղիչ էլեկտրական	55000	50000
50.1	Վառելանյութի մղիչ մեխանիկական	50000	45000
51.1	Վառելանյութի զտիչ	10000	10000
52.1	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	15000	15000
53.1	Վառելանյութի փողրակ	25000	25000
54.1	Աքսելերատորի ճոպան	15000	15000
55.1	Օդի զտիչ	25000	25000
56.1	Օդորակիչի զտիչ	20000	20000
57.1	Ջերմաստիճանային տվիչ	25000	25000
58.1	Յուղի տվիչ	30000	30000
59.1	Բաշխիչ լիսեռի տվիչ	140000	130000
60.1	Ծնկաձև լիսեռի տվիչ	130000	120000
61.1	Մաքրող հեղուկ ABRO	5000	5000
62.1	Օդի ծախսի տվիչ	80000	70000
63.1	Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակ	25000	25000
64.1	Արագաչափի տվիչ	15000	15000
65.1	Հովհարի տվիչ	15000	15000
66.1	Ջրի տվիչ	25000	25000
67.1	Բենզոբաքի տվիչ	25000	25000
68.1	Մարման ընթացքի կարգավորիչ	15000	15000
69.1	Մարման ընթացքի տվիչ	15000	15000
70.1	Ղեկավարման համակարգիչ	350000	325000
71.1	Պարապ ընթացքի տվիչ	150000	145000
72.1	Դրոսելային փականի տվիչ	80000	75000
73.1	Հետընթացի տվիչ	15000	13000
74.1	Թթվածնի տվիչ	50000	45000

	3. Սառեցման և արտածման համակարգ		
75.1	Հովիարի փոկ	25000	25000
76.1	Հովիար	50000	45000
77.1	Ռադիատոր	250000	235000
78.1	Ընդարձակող բաք	30000	30000
79.1	Ընդարձակող բաքի փական	15000	15000
80.1	Ռադիատորի փողրակ	15000	15000
81.1	Թերմոստատ	40000	35000
82.1	Ջրի պոմպ	90000	75000
83.1	Ջրի պոմպի առանցքակալ	8000	7000
84.1	Ջրի պոմպի թևակ	8000	7000
85.1	Սառեցման հեղուկ *1 լիտր*	6000	6000
86.1	Ջրի պոմպի սռնանիվ	2000	2000
87.1	Հոլովակ	25000	25000
88.1	Փոկ	10000	10000
89.1	Փոկ կոնդիցիոների	30000	30000
90.1	Ծորակ	30000	30000
91.1	Խլարարի ներդիր	10000	10000
92.1	Խլարարի կախոց	5000	5000
93.1	Կրոնշտեյն	4000	4000
94.1	Անուր (Խամուտ)	1000	1000
95.1	Խլարար	110000	100000
96.1	Ռեզոնատոր	75000	70000
97.1	Վառարանի ռադիատոր	40000	40000
98.1	Վառարանի շարժիչ	40000	40000
	4. Կցորդում և ՓՏ		
99.1	Կցորդման բանվորական գլան	25000	25000
100.1	Կցորդման գլխավոր գլան	25000	25000
101.1	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	1000	1000
102.1	Կցորդման տանող սկավառակ	130000	120000
103.1	Կցորդման տարվող սկավառակ	55000	50000
104.1	Կցորդման առանցքակալ	25000	25000
105.1	Կցորդման փողրակ	10000	10000
106.1	Կցորդման ճոպան	5000	5000
107.1	Կցորդման եղան	7000	7000
108.1	Կցորդման եղանի փոշեթիկնոց	5000	5000
109.1	Կցորդման հեղուկի տարա	5000	5000
110.1	Փոխանցման տուփ	800000	750000
111.1	ՓՏ-ի առջևի խցուկ	10000	10000
112.1	ՓՏ-ի հետևի խցուկ	10000	10000
113.1	ՓՏ-ի առանցքակալ	27000	27000
114.1	ՓՏ-ի առաջնային լիսեռ	90000	85000
115.1	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	90000	85000
116.1	ՓՏ-ի եղանիկ	14000	14000
117.1	ՓՏ-ի ատամնանիվ	50000	45000
118.1	Համաժամիչ	10000	10000

119.1	Մուֆտ	25000	25000
120.1	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	60000	50000
121.1	Տրանսմիսսիոն յուղ, *1 լիտր*	7000	7000
122.1	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10000	10000
123.1	Հերմետիկ	4000	4000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
124.1	Բաշխիչ տուփ	-	-
125.1	Բաշխիչ տուփի խցուկ	-	-
126.1	Բաշխիչ տուփի առանցքակալ	-	-
127.1	Բաշխիչ տուփի ատամնանիվ	-	-
128.1	Բաշխիչ տուփի լիսեռ	-	-
129.1	Կարդանային լիսեռ	-	-
130.1	Էլաստիկ մուֆտ	-	-
131.1	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	-	-
132.1	Կարդանային լիսեռի խաչուկ	-	-
133.1	Հեղույս մանեկ	-	-
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
134.1	Հետևի կամ առջևի կամրջակ	-	-
135.1	Ռեդուկտոր	-	-
136.1	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	150000	150000
137.1	Դիֆֆերենցիալ	-	-
138.1	Դիֆֆերենցիալի սատելլիտ	-	-
139.1	Տանող ատամնանիվի խցուկ	-	-
140.1	Տանող ատամնանիվի առանցքակալ	-	-
141.1	Դիֆֆերենցիալի առանցքակալ	-	-
142.1	Կիսասռնի	-	-
143.1	Կիսասռնու առանցքակալ	-	-
144.1	Կիսասռնու միջադիր	-	-
145.1	Կիսասռնու խցուկ	-	-
146.1	Կարգավորիչ տափողակ	-	-
	7. Կախոց		
147.1	Տրավերս	170000	170000
148.1	Կրոնշտեյն	10000	10000
149.1	Ձախ կամ աջ հոդակապ	3000	3000
150.1	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	3000	3000
151.1	Անվակունդ	40000	40000
152.1	Անվակունդի խցուկ	5000	4600
153.1	Անվակունդի ներքին առանցքակալ	11300	10600
154.1	Անվակունդի արտաքին առանցքակալ	11300	10600
155.1	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	7400	6500
156.1	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	7400	6500
157.1	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	7400	6500
158.1	Հարվածամեղմիչի թասակ	27000	22000
159.1	Ձսպանակ	45000	40000
160.1	Առջևի ցնցամեղմիչ	37000	33000
161.1	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	7000	7000

162.1	Ցնցամեղմիչի վռան	5000	3000
163.1	Ներքևի լծակ	87000	82000
164.1	Ներքևի լծակի վռան	11000	9000
165.1	Վերևի լծակ	47000	42000
166.1	Վերևի լծակի վռան	11000	9000
167.1	Գնդե հոդակապ	12000	10000
168.1	Առջևի կայունարար	46000	43000
169.1	Առջևի կայունարարի վռան	7000	5000
170.1	Առջևի կայունարարի առջևի վռան	7000	5000
171.1	Հետևի կայունարարի վռան	8000	6000
172.1	Կայունարարի կանգնակ	15000	15000
173.1	Հետևի զսպանակ	13000	11000
174.1	Հետևի ցնցամեղմիչ	27000	24000
175.1	Հետևի մետաղաձող (շտանգա)	-	-
176.1	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	-	-
177.1	Հետևի անկյունագծային լծակ	-	-
178.1	Անկյունագծային լծակի վռան	-	-
179.1	Զսպակ (ռեսսորա)	-	-
180.1	Զսպակի վռան	-	-
181.1	Զսպակի միջադիր	-	-
182.1	Զսպակի բռնիչ	-	-
183.1	Աջ կամ ձախ ձգան	-	-
184.1	Ծայրակալ	-	-
185.1	Ձգան մեջտեղի	-	-
186.1	Անվահեծ	230000	220000
187.1	Քսայուղ լիտոլ (150 գր.)	-	-
188.1	Քսայուղ Շռուս (150 գր.)	-	-
	8. Ղեկային մեխանիզմ		
189.1	Ղեկային կալուն	375000	330000
190.1	Ղեկային կալունի առանցքակալ	32000	25000
191.1	Ղեկային կալունի խաչուկ	32000	25000
192.1	Հիդրոուժեղարար	6000	5000
193.1	Հիդրոուժեղարարի փոկ	6000	5000
194.1	Հիդրոուժեղարարի փողրակ	17000	15000
195.1	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	19000	17000
196.1	Հիդրոուժեղարարի պոմպ	420000	395000
197.1	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	5000	4000
198.1	Ղեկային ձող	37000	34000
199.1	Ղեկային ձողի ծայրակալ	7000	5000
200.1	Հիդրոուժեղարարի յուղ, *1 լիտր*	5000	5000
201.1	Ճոճանակ	24000	22000
202.1	Ճոճանակի վռան	6000	5000
203.1	Ղեկային ժապավեն	25000	22000
	9. Արգելակային համակարգ		
204.1	Գլխ. գլան	37000	35000
205.1	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	7000	5000

206.1	Վակուումային ուժեղարար	76000	72000
207.1	Վակուումային ուժեղարարի նորոգման հավաքածու	17000	14000
208.1	Բանվ. գլան	12000	10000
209.1	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10000	9000
210.1	Արգելակային փողրակ	15500	12000
211.1	Սուպպորտի ուղղորդիչ	5000	5000
212.1	Սուպպորտի մանժետ	1200	1000
213.1	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	27000	27000
214.1	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	5000	5000
215.1	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	27000	23000
216.1	Առջևի արգելակային սկավառակ	44000	42500
217.1	Հետևի արգելակային սկավառակ	44000	42500
218.1	Ձեռքի արգելակի ճոպան	-	-
219.1	ABS-ի տվիչ	12000	11500
220.1	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	7800	7800
221.1	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	7800	7800
222.1	Ձեռքի արգելակի ճոպան	-	-
223.1	Ձեռքի արգելակի լծակ	-	-
	10. Էլեկտրասարքավորում		
224.1	Գեներատոր	370000	350000
225.1	Գեներատորի դիոդային կամրջակ	36000	34500
226.1	Գեներատորի ռելե	22000	22000
227.1	Գեներատորի առանցքակալ	13000	11000
228.1	Գեներատորի խարիսխ	96000	95000
229.1	Գեներատորի փաթույթ	96000	95000
230.1	Ստարտեր	220000	218000
231.1	Ստարտերի ռելե	7000	5000
232.1	Ստարտերի ածուխ	24000	23500
233.1	Բենդեքս	42000	40500
234.1	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	43000	41500
235.1	Ստարտերի խարիսխ	78000	78000
236.1	Առջևի լապտեր	55000	50000
237.1	Առջևի թարթիչ	15000	15000
238.1	Հետևի լապտեր	48000	48000
239.1	Հետևի թարթիչ	17000	16500
240.1	Արգելակային լապտեր	14000	14000
241.1	Լամպ	10000	10000
242.1	Էլեկտրական անջատիչ	9000	8000
243.1	Էլեկտրական տվիչ	46500	45000
244.1	Էլեկտրական չափիչ սարք	145000	130000
245.1	Բռնկման կողպեք	55000	50000
246.1	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	120000	115000
247.1	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	80000	78000
248.1	Վառոցքային լարերի խուրց	58000	55000
249.1	Վառոցքի մոմի ծայրակալ	30000	30000
250.1	Վառոցքի կոճ	79000	75000

251.1	Վազքաչափ	-	-
252.1	Վազքաչափի ճոպան	-	-
253.1	Արագաչափ	-	-
254.1	Ազդանշան	25000	25000
255.1	Ապակելվացիչ	17000	17000
256.1	Ապակելվացիչի պոմպ	10000	10000
257.1	Ապակելվացիչի հեղուկի տարա	10000	8000
258.1	Ապակեմաքրիչի շարժիչ	37000	35000
259.1	Դռների կենտրոնական փական	27000	25000
260.1	Դռների էլեկտրական փական	27000	25000
261.1	Ազդանշանային համակարգ	37000	35000
262.1	Մագնիտոլա	47000	45000
263.1	Էլեկտրաամբարձիչ	47000	45000
264.1	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	35000	3500
265.1	Էլեկտրաամբարձիչների անջատիչների բլոկ	42000	42000
266.1	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորգման համար*	10000	10000
	Ընդամենը	**18899380**	**17685180**

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է SU – 1 ծառայություն / տեխ. զննում ըստ հավելվածի/
SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում ըստ հավելված 2-ի/:

- Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
- Մասնակիցը պետք է հավաստի,որ
- Ավտոտեխնիկական սպասարկման կայանում ունենա բարձր որակավորմամբ հետևյալ ավտոտեխսպասարկման մասնագետներ.

1. Շարժիչագործի.
2. Փոխանցման տուփ և կամրջակ վերանորոգողի
3.Ավտոէլեկտրիկի
4.Վուլկանացնողի և կարգավորողի
5.Թափքի վերանորոգողի և ավտոներկարարի
6. Ավտոընթացագործի և այլ մասնագետի:

Վերանորոգման ներկայացված ավտոմեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացված օրը և մեկօրյա ժամկետում Պատվիրատուին հայտնի տեղեկատվություն վերանորոգման վերաբերյալ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
գ. Ջրվեժ, Մելքոնյան 76
ՀՀ ֆինանսների նախարարության ԿԳ
Հ/Հ 900102278059
ՀՎՀՀ 03546091

----------Ն.Սանթրոսյան
(ստորագրություն)

Կ.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Կահման» ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
Շիրազի փ. 30 34
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 4570023314500100
ՀՎՀՀ 01269447

----------Գ.Միքայելյան
(ստորագրություն)

Կ.S.

Հավելված N 2
«27» 03 2026թ. կնքված
ԿՄՋՀ-ԳՀԾՁԲ-26/6/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների /աճողական/, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	50111170/2	Lexus 250 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ	-	-	275000	550000	550000	550000	825000	825000	825000	1100000	1100000	1100000	1100000
3	50111170/3	Renault DASTR ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ	-	-	275000	550000	550000	550000	825000	825000	825000	1100000	1100000	1100000	1100000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
գ. Ջրվեժ, Մելքոնյան 76
ՀՀ ֆինանսների նախարարության ԿԳ
Հ/Հ 900102278059
ՀՎՀՀ 03546091

----------Ն.Սանթրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կաիման» ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
Շիրազի փ. 30 34
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570023314500100
ՀՎՀՀ 01269447

---------- Կ.Միքայելյան
(ստորագրություն)
Կ.Տ.